«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հնարավոր

մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲ ընկերության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք (ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-14/4»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Զ. Անդրանիկի 2 հասցեով, մինչև 2014թ. օգոստոսի 01-ը, ժամը $12^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կարինե Հովսեփյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲ ընկերության շենքում, Զ. Անդրանիկի 2 հասցեով, N 302 սենյակում, 2014թ. օգոստոսի 01-ին, ժամը $12^{00}$-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲ ընկերության կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերումը:

«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲ ընկերության կարիքների համար՝ դեղորայքի մատակարարման (որոնք կազմված են՝ 7 չափաբաժիններից) տեխնիկական

բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Ապրանքների մատակարարման պայմաններն են՝

-սոց. անապահով խմբում ընդգրկված բնակչությանը անվճար տրվող դեղորայքի առաքում պատվերը ընդունելուց մեկ-երկու օրվա ընթացքում: Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսերը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 3), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 4): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲ ընկերության էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mp09@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝ Ե. Մ. Սարգսյան